Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1076[4]-19.01.2011-ՏՏ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել նոր 54.5-րդ հոդվածով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 54.5. Հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասին չհայտնելը

Հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխությունների մասին համայնքի ղեկավարի կողմից օրենքով սահմանված ժամկետում եւ օրենքով սահմանված մարմիններին չհայտնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում համայնքի ղեկավարի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 219.1-րդ հոդվածի առաջին պարբերությունում «եւ 152.1-րդ հոդվածի 4-րդ մասով» բառերը փոխարինել «,152.1-րդ հոդվածի 4-րդ մասով եւ 54.5-րդ հոդվածով» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը,	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ կառավարություն	«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան լրացում, համաձայն որի քաղաքաշինական փաստաթղթերի մշակմանը մասնակցած նախագծային կազմակերպությունները կամ անձինք չեն կարող կատարել կամ ներգրավվել իրենց կողմից մշակված նախագծերի փորձաքննությանը:	Ընդունվել է	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածը լրացվել է 5-րդ մասով:
ՀՀ կառավարություն	«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան լրացում, համաձայն որի ՀՀ կառավարության սահմանած տեխնիկապես ոչ բարդ օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը, կառուցապատողի և շինարարություն իրականացնողի համաձայնությամբ կարող է փոխարինվել շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրով:	Ընդունվել է	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածը լրացվել է 6-րդ մասով:
	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ հաշվի առնելով, որ քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության, շինարարության իրականացման և շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեությունների լիցենզավորման կարգերում կատարված փոփոխությունների համաձայն նշված	Ընդունվել է	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի «16. Քաղաքաշինության բնագավառ» բաժնում կատարվել են համապատասխան

	գործունեությունների իրականացման համար լիցենզավորվող անձանց լիցենզիաների հետ տրամադրվելու են համապատասխան ներդիրներ՝ ըստ ոլորտների:		փոփոխություններ:
ՀՀ ԱԺ պատգամավոր Արայիկ Հովհաննիսյան	«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 7-րդ հոդվածի առաջին մասի 3) ենթակետը հանել:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: